

**ՄԱՅՐ ԱՍՏՎԱԾՈՒՅՈՒ ԴԻՑԱՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ
ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ՀԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐԱՍԻԱԿԱՆ ՊԱՇՏԱՍՈՒՆՔՆԵՐ)**

Գ. Ա. ՍԱՐԳՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Կրոնագիտական գրականության հանրաճանաչ տեսակետի համաձայն «Հեթանոսությունը համամարդկային, համաշխարհային երևույթ է և հանդիսանում է մտքի ու զգայության բարդ ու վիթխարի աշխատանքի ոլորտ: Դա ոչ թե առանձին տոհմերի մեկուսացված, այսպես ասած սեփական վախի և սեփական ուժերի աշխատանք է, այլ՝ համամարդկային աշխատանք, որտեղ ժողովուրդները փոխանակում էին սեփական դիտարկումների և զգացմունքների արդյունքները»¹: Այդ համակարգի առանցքային, կարելի է պնդել նաև՝ համամարդկային ընդհանրական որակներից մեկն էլ Մեծ Մոր (Մայր աստվածուհու) դիցապաշտամունքային ըմբռնումներն են:

Մայր Աստծու պաշտամունքը հարատև գոյություն ունեցող այն իրադարձություններից է, որոնք ոչ միայն յուրահատուկ կերպով կրկնվում են տարբեր դիցարաններում, այլև արքետիպային կերպարներ են, որոնք անգիտակցականի կայուն տարրեր լինելով՝ փոփոխում են իրենց դրսևորման ձևերը: Արքետիպը մարդկային հոգեկառույցի անբաժան մասն է, մարմնավորվում է հոգու բնագոյային տվյալներով և նախակերպարներով: Դրանք «... ոչ միայն տարածվում են ավանդությամբ, լեզվի, միգրացիայի օգնությամբ, այլև՝ կարող են առանց որևէ արտաքին ազդակի ներուճակ կերպով ծագել ցանկացած ժամանակ, ցանկացած վայրում»²: Արքետիպը նախափորձային (ապրիորի) տվյալները կյանքի կոչելու ունակություն է: Մայրական արքետիպի հետ առնչվող որակներն են՝ մայրական հոգատարությունը, կարեկցանքը, մայրական իշխանությունը, հոգևոր վեհությունը: Բացասական առումով Մեծ մոր արքետիպը դրսևորվում է որպես անխուսափելի առեղծված՝ ինչպես ճակատագիրը: Մայր աստվածուհու դիցաբանական այդ հատկանիշները Կ. Յունգը բնութագրում է որպես «սիրող և ահարկու մայր»³:

Մայր աստվածուհու դիցապաշտամունքային ըմբռնումները սերտորեն շաղկապված են «Տիեզերքի արարման» կամ «կյանքի վերարտադրման» ըմբռնման հետ: Դա եղել է աշխարհակառույցի դիցաբանական մոդելների ան-

¹ Тихомиров Л. А., Религиозно-философские основы истории. М., 2004, с. 65.

² Юнг К. Г., Психология архетипа младенца. М., 1990, с. 211.

³ Տե՛ս նույն տեղում:

փոփոխ ըմբռնումներից մեկը, մի յուրահատուկ կրկնություն, որն ամեն «նոր տարի» վերածվում էր «նոր դարասկզբի տոնախմբության»⁴: Դիցապաշտները վերջինիս հետ են կապել նաև «մահացածների կյանքի շրջադարձը», մի գաղափար, որը պարբերաբար վերարտադրում էր նաև հարության հանդեպ հույսը: Այն պատերազմում է իշխել, որ նոր տարվան մոտ օրերին ժամանակը կարող էր անհետանալ. այդ կախարդական պահին աշխարհը կործանվում էր և նորից վերակառուցվում⁵:

Այս պարագայում Մայր աստվածուհու դիցապաշտամունքային ըմբռնումները հանդես են եկել յուրատիպ ընդհանրության ձևով⁶: Պատճառներից մեկն այն է, որ այս պաշտամունքը անբակտելիորեն կապված է տիեզերածնական պատկերացումների հետ, իսկ «Բազմաստվածային տիեզերածնական համակարգերն ակնհայտ կերպով մերժենում են բնության հավիտենական ուժերի պատկերացումների հետ, որոնք քառսից ինքնուրույն կերպով կարգավորվում են նույն բնության մարդակերպ ուժերի կողմից»⁷: Այդ իսկ պատճառով էլ Մայր աստվածուհու դիցապաշտամունքային ըմբռնումները, ճիշտ այնպես, ինչպես «Յեթանոսության աստվածները, ... կերպավորում են բնության տարրերը»⁸: Մայր աստվածուհու դիցապաշտամունքային ըմբռնումների քննական արժևորման գործում չի կարելի աչքաթող անել նաև կրոնական սինկրետիզմի պահը: Բանն այն է, որ կրոնական սինկրետիզմը հանդես է գալիս բաց համակարգի որակով՝ հավատալիքների, պաշտամունքային տարրերի, աշխարհայացքի, աշխարհընկալման, ինչպես նաև՝ կրոնի և հասարակա-

⁴ Ինչպես Մ. Էլիադեն է փաստում, նախնադարյան տոհմերի մեծագույն մասի մոտ «նոր տարին» ասոցացվել է «նոր բերքի» և կամ «նոր պտղաբերության» վրայից արգելքը (տաբուն) հանելու հետ: Իսկ եթե աճեցվում էր տարբեր ժամանակներում հասունացող մի քանի տեսակի բերք, այդ պարագայում առնչվում ենք բազում «նոր տարիների» տոնակատարության հետ, տե՛ս **Элиаде М.**, Миф о вечном возвращении. М., 2002, с. 25: Դմնտ.՝ **Nilsson M. P.** Primitive Time Reskoning. Lund, 1920, p. 270; **Զ. Ջ. Ֆրեզեր**, Ոսկե ճյուղը, Երևան, 1989, էջ 411-413:

⁵ Տե՛ս **Элиаде М.**, Космос и история. М., 1987, с. 83:

⁶ Մասնագիտական գրականության հանրաճանաչ տեսակետներից մեկի համաձայն Մայր աստվածուհու դիցաբանական պաշտամունքի համար ընդհանրականը «Մայր Երկրի» խորհրդանշանն է, «... բայց Մայր Երկրի խորհրդանշական պատկերը միակը չի, ... պաշտամունքի համակարգում այն հանդես է գալիս այսպես ասած երկու եռոյամբ՝ որպես **Մայր** և որպես **Երկիր** (ընդգծումը մերն է՝ Գ. Ս.)», **Зелинский Ф. Ф.**, Религия эллинизма. Пб., 1922, с. 29. ⁷ **Тихомиров Л. А.**, Религиозно-философские основы истории. М., 2004, с. 71.

⁸ **Язычество** (авт. сост. А. А. Грицанов, А. В. Филиппович). Мн., 2006, с. 14: Յետաբրքորական է նաև հեղինակային այն պնդումը, թե «Ի հակադրություն արքահամական կրոնների (հուդայականություն, քրիստոնեություն, իսլամ) ամբողջական աշխարհայացքին, հեթանոսությունը անհատական դիցահայացք է», **նույն տեղում**, էջ 25:

կան գիտակցության ձևերի օրգանական համադրության և «կուտակման» տեսքով⁹:

Մայր աստվածուհու գլխավոր գործառնություններից ակնհայտ սինկրետիկ բնույթ ունի հողի, պտղաբերության, կռվի, քաղաքների և հասարակական կյանքի այլ ոլորտների հովանավորչությունը: Այսպես, հունական դիցաբանության մեջ քաղաքների (Աթենաս Պոլիաս) և հերոսների (Աթենաս Պրամաքոս-ռազմուհի) հովանավոր ու պահապան է համարվել ռազմի դիցուհի, Ջևսի (և բանականության օվկիանուհի-աստվածուհի Մետիսի) դուստր Աթենաս-Պալլասը (հռոմեական համարժեքը՝ Միներվա): Նրա գլխավոր սրբավայրում՝ Պարթենոնում է պահվել դիցուհուն նվիրված և ակրոպոլի պահապան համարվող օձը: Բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել նաև նրա տիեզերական գծերի (նրա ծնվելիս ոսկե անձրև է տեղում, համարվել է երկնքի աստվածուհի, ամպերի ու կայծակի տիրուհի) և «խաղաղ աշխատանքի հովանավոր» (Աթենաս Էրգանե) լինելու վերաբերյալ: Նրա «սուրբ ծառը» ձիթենին է՝ ճակատագրի ծառը, հետևաբար նա անձնավորել է նաև ճակատագիրը: Մեզ է հասել մի ավանդազրույց, թե Աթենասն ինչպես է երիտասարդներից մեկին զրկել տեսողությունից, երբ վերջինս պատահաբար տեսել է նրան լողանալիս: Բայց հետագայում նրան օժտել է գուշակության շնորհով: Աթենաս-Պալլասն օժտված է նաև կազմակերպչական գործառնությունով, հովանավորում է հերոսների, պահպանում է հասարակական կյանքի ռիթմիկ ընթացքը: Ուշ անտիկ շրջանում նրան են վերագրվել նաև «տիեզերական մտքով օժտված» լինելու որակները: Նա Օրենսդիր է, Աթենական պետության և իմաստության հովանավորը: Երբեմն նրան են վերագրվել նաև «մայրության» խորհրդանիշ համարվող (որպես պտղաբերության Աստվածուհի) երկրագործական տոները: Աթենաս-Պալլասի ծնունդի մասին պատմող առասպելը բովանդակում է նաև հայրիշխանության դարաշրջանի հերոսական դիցաբանությանը բնորոշ գծեր: Նա կարծես թե Ջևսի անմիջական շարունակությունն է, նրա մտահաղացումների և գործողությունների իրականացնողը¹⁰: Նա օլիմպոսյան դիցաբանական շեր-

⁹ Տե՛ս **Капустин Н. С.**, Особенности эволюции религии. М., 1984, с. 13; **Сухов А. Д.**, Религия как общественный феномен (философские проблемы исследования). М., 1973, с. 95:

¹⁰ Այդ ամենի մասին մանրամասները տե՛ս **Ն. Կուն**, **Յին Զունաստանի լեգենդներն ու առասպելները**, Երևան, 1979, էջ 45-46, **Мифы народов мира (энциклопедия)**. Т. 1, М., 1987, с. 125-128; **Мифология. Большой энциклопедический словарь**. М., 1998, с. 72-73: **Հմտ.**՝ **Всеобщая история религий мира (иллюстр. энциклопедия)**. М., 2005, с. 180: Այս համատեքստում օբյեկտիվ գնահատումների շարքում պետք է դասել **Ֆ. Ջելինսկու** այն պնդումը, թե Մայր աստվածուհու «... պաշտամունքը պատկանում է հին հունական կրոնի ամենախճողված հիմնահարցերին: ... Զունական այդ Մայր աստվածուհուց մենք պարտավոր ենք տարբերել Զունաստանում և հույների կողմից հարգված նույն անունը կրող ասիական աստվածուհուն», **Зелинский Ф. Ф.**, Религия эллинизма. СПб., 1922, с. 29-30:

տի գլխավոր աստվածուհիներից է և դիցաբանական երևակայության կողմից իր հովանավորչական բնույթով գրեթե լիովին հավասարեցվում կամ նույնացվում է Մայր աստվածուհու հովանավորչական գործառույթի հետ:

Դիցաբանական այդ հատկանիշների զուգահեռները և ակնհայտ նմանությունները կարելի է տեսնել նաև հայկական դիցաբանության մեջ: Թեև հայկական դիցաբանության վերաբերյալ մեզ աղբատիկ հիշատակություններ ու բանավոր ավանդություններ են հասել, սակայն դրանք աներկբա վկայում են, որ մեզանում ևս ազգային հոգեբանության վրա խոր ազդեցություն են ունեցել Մայր աստվածուհու դիցապաշտական ըմբռումները: Այդ տեսանկյունից խիստ տիպական է հատկապես հայոց հեթանոսական կրոնի ամենասիրելի աստվածություններից մեկի՝ մեծ ժողովրդականություն վայելող, սահմանային պաշտամունքի արժանացած Անահիտի պաշտամունքը, որին վերագրվել է նաև «հովանավոր Աստծու» գործառույթ, քանի որ համարվել է նաև «Արտաշատ մայրաքաղաքի հովանավոր» Աստվածուհին:

Անահիտ դիցուհու պաշտամունքային առանձնահատկությունների համեմատական վերլուծությունը հետաքրքրություն է ներկայացնում նաև այն պատճառով, որ Լիդիայում նրա պաշտամունքը նույնացվել է «Մեծ Մոր» կամ Արտեմիսի հետ: Պահպանելով իր «մայրիշխանական անկախությունը» իբրև «մայր-իմաստություն» և «ողջամտություն», հելլենիստական դարաշրջանում նրա պաշտամունքը տարածվել է նաև Փոքր Ասիայում, Հունաստանում և անգամ՝ Հռոմում: Հայոց դիցաբանական աստվածներից ոչ ոք այդքան մեծ ժողովրդականություն չի վայելել, որքան նա: Անահիտը համարվել է բարոյական «Մայր ամենայն զգաստութեանց», «խոհեմության» և «պարկեշտության մայրը», «ազգի սնուցող», «երկրի ու կյանքի կեցուցիչ» և «ազգը փառավորող Աստվածուհի», «պտղաբերության, արգասավորության և ծննդաբերության» հովանավոր դիցուհի¹¹: Դիցապաշտ հայերը իրենց ցանկացած նախածնունդյան մեջ հովանավորություն և առողջություն են խնդրել Անահիտից: Նրան կոչել են «Մեծ տիկին», «Ոսկեծղի», «Ոսկեմատն»: Իր խորհրդանշաններով Անահիտ Աստվածուհին համապատասխանել է եգիպտական Նեֆտիդային, հունական Արտեմիսին և հռոմեական Դիանային: Պլինիոսը Անահիտին համարում է «հայոց ամենասիրելի դիցուհի», իսկ Ստրաբոնը պնդում է, թե «... Անահիտի պաշտամունքը հայոց մեջ գերազանցում է բոլորին. զանազան տեղեր նրա

¹¹ Տե՛ս Ղ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 135: Տե՛ս նաև Այդ ամենի մասին մամրամասները տե՛ս Мифы народов мира (энциклопедия). Т. 1, с. 76; Мифология. Большой энциклопедический словарь, с. 43:

անվան տաճարներ են կանգնեցված և հատկապես Եկեղիքում¹²: Իսկ Ն. Ա-դոնցը այդ պաշտամունքում մատնանշում է սինկրետիզմի պահը և պնդում, որ անգամ Իշտարը «... ընտանի է եղել իրոք հայ մթնոլորտում ... և որոշ շրջանում հավանորեն կրում էր Ամահիտ անունը»¹³: Ամահիտի՝ որպես պտղաբերության աստվածուհու պաշտամունքի հետ սերտորեն առնչվել է բերք ու բարիքի տոնը: Հեթանոս հայերը Ամահիտին են նվիրաբերել առաջին բերքը: Ընդ որում, ինչպես Ագաթանգեղոսն է վկայում, հեթանոս հայերը Ամահիտի դիցին նվիրաբերել են նաև պսակներ, ծառերի թավ ճյուղեր և այլն¹⁴:

«Ամահիտ» բառը հին պարսկական ծագում ունի և առաջացել է «Anahita» բառից, որը նշանակում է «ամբիծ», «ամառատ», «արգասավորող»: Դիցապաշտ երևակայության համաձայն՝ նա է տղամարդկանց պարգևել արգասավորության ունակություններ: Իսկ կանանց հովանավորել է «բախտավոր ծննդաբերության մեջ»: Մայր-աստվածուհիների պաշտամունքի ընդհանրական գծերից մեկն էլ նրանց վերագրվող «բուժիչ ունակությունն է»: Ընդ որում, այդ հատկությամբ օժտված են համարվել «Մայրության» հատկանիշներով

¹² Ստրաբոն (օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին), Երևան, 1940, էջ 67: Հետաքրքրական է նաև Պրոկոպիոս Կեսարացու այն հավաստումը, որ ըստ հայկական ավանդության, Երեզ ավանում Արտեմիս-Ամահիտի տաճարը կառուցել է առասպելական Օրեստեսը: Այդ կապակցությամբ Ն. Ադոնցը գրում է. «Խոսքը Ամահիտի հռչակավոր սրբարանի մասին է, որի ծագումն, ուրեմն, հայերը վերագրում էին Օրեստին»: Ավանավոր հայագետը վկայակոչում է նաև, որ այս գրույցը արտացոլվել է նաև Ստրաբոնի պատմության մեջ, տե՛ս Ն. Ադոնց, Հին Հայոց աշխարհայացքը / Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 72: Հմմտ.՝ Ղ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, էջ 134,

¹³ Ն. Ադոնց, Հին Հայոց աշխարհայացքը, էջ 41: Պատմաբանը խոսում է նաև Դերկետո-Շամիրամ-Ամահիտ անցումային պաշտամունքի հավանական լինելու մասին, տե՛ս Նույն տեղում, էջ 77:

¹⁴ Տե՛ս Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Երևան, 1977, էջ 40: Մատնանշելով Կիբելե-Դերկետո և վերջինիս դուստր Շամիրամի ու Ամահիտ դիցուհու պաշտամունքային աղերսները Ն. Ադոնցը գրում է. «Հայաստանը և հայ ժողովուրդը իր արևմտյան և հարավային հարևանների, ասենք, Կիբելեի և Իշտարի աշխարհների հետ կապված է եղել հմուց ի վեր քաղաքակրթական կապերով, իսկ Կիբելեի հետ՝ նաև ցեղային: Երկու տիկիններն էլ հավասարապես կարող էին տիրապետական գահ և պաշտամունքի սեղան ունենալ Հայաստանում: Տեսանք, որ Իշտարը գեթ Շամիրամ անունով ընտանի է եղել իրոք հայ մթնոլորտում: Թվում է, որ մյուս աստվածային տիրուհին ևս (Կիբելեն՝ Գ. Ա.) ընդունված է եղել և որոշ շրջաններում հավանորեն կրում էր Ամահիտ անունը: Եթե մեկի զխավոր սրբավայրը հին Տոսպն էր, մյուսինը՝ Երիզ ավանն էր: Հեռավոր Եփեսոսում Կիբելեն փոխել էր իր անունը և կոչվում էր Արտեմիս և՛ մինչև իսկ Ամահիտ: Ավելի բնական էր մույն անունը Հայաստանում, որ իրանական քաղաքակրթության այնքան մոտ էր կանգնած», Ն. Ադոնց, Հին Հայոց աշխարհայացքը, էջ 41: Վերլուծական գրականության մեջ այդ գործընթացի պատճառներից է համարվում այն, որ «Արևելքից Արևմուտք էր թափանցում և տարածվում կրոնական ուսմունքների, պաշտամունքների և միստերիաների ալիքը: Այդ ուսմունքներն ու պաշտամունքները կայսրության տարածքում ամրապնդման ու զարգացման համար ամենուր բարենպաստ հող և մթնոլորտ գտան և փոխթափանցեցին մեկը մյուսի մեջ», տե՛ս **Асмус В. Ф.**, Античная философия. М., 1976, с. 509: Հմմտ.՝ **Гарнак А.**, Миссионерская проповедь и распространение христианства в первые три века. СПб., 2007, с. 42-56: Всеобщая история религий мира (иллюстр. энциклопедия), с. 268-271:

օժտված բոլոր աստվածուհիները: Անահիտի պաշտամունքին նույնպես բնորոշ է եղել այդ ամենը: Նրան նույնպես վերագրվել են բուժական խորհրդանշաններ և նրանից առողջություն են հայցել: Անահիտի զխավոր մեկյանը գտնվել է Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Երիզա ավանում, Գայլ գետի ափին: Անահիտի մեկ այլ խոշոր տաճար գտնվել է Տուրուբերան նահանգի Տարոն գավառի Աշտիշատ վայրում՝ Արածանի գետի աջ ափին: Անահիտական մեկյաններ են եղել նաև Հայաստանի հեթանոսական խոշոր կենտրոններում՝ Արմավիրում, Արտաշատում, Բագարանում, Անահտաձորում և այլ վայրերում: Մեզ հասած հիշատակություններից կարելի է հետևեցնել, որ **Անահիտի պաշտամունքը լայն տարածված է եղել Հայաստանի արևմտյան, հարավային, արևելյան և կենտրոնական շրջաններում:** Հայաստանի հյուսիսային շրջաններում անահիտական մեկյանների գոյության մասին մեզ ոչինչ հայտնի չէ: Սակայն դա ամենևին էլ չի կարող հիմք հանդիսանալ պնդելու, թե Հայաստանի այդ տարածաշրջանում Անահիտի պաշտամունքը տարածված չի եղել: Դիցուհուն մվիրված տոները, որոնք կատարվել են ապրիլի առաջին օրերին և օգոստոսի կեսերին, հնարավորություն են տալիս պնդելու, որ նրա պաշտամունքը աղերսվել է երկրագործության սկզբնավորության և վերջավորության հետ:

Հայկական դիցաբանում Անահիտի պաշտամունքին զուգընթաց համընկնող հատկանիշներով օժտված է եղել ևս մեկ դիցուհու՝ Նանեի պաշտամունքը¹⁵: Այս դիցուհու վաղ շրջանի պաշտամունքի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Հայտնի է միայն, որ ուշ շրջանի դիցաբանական համակարգում Նանե դիցուհին նույնպես համարվել է «Արամազդի դուստրը»: Հելլենիստական շրջանում նրա պաշտամունքը նույնացվել է Աթենասի պաշտամունքի հետ: Սակայն Նանեի պաշտամունքը ներկայացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրա մեկ այլ գործառնական հատկանիշի՝ Մայր-աստվածության հետ ունեցած պաշտամունքային առնչություններին (այս եզրակացության հիմնավորումներից մեկն այն է, որ այսօր էլ հայերենի մի շարք բա-

¹⁵ Նրանց դիցապաշտամունքային ընդհանրությունների մասին Ն. Ադոնցը գրում է. «Հայ պանթեոնի մյուս դիցուհին՝ Նանեն, նմանապես նույն աստվածության մի այլ դեմքն է: Հիշելու է, որ առասպելի փռլուզիական հեղվածքում, որ տալիս է Արմոքիոսը, Ատիսի մայրը կրում է Նանա անունը: ... Անհավանական չէ, որ նման զույգի հետևանքով Նանան բազմած լինի Թորդանում իբրև ուրույն Աստվածուհի: Նույն կարգի Աստված է և Աստղիկը: Տարբերությունը լոկ անվանական է և գուցե նաև տեղական: Աստղիկը Տարոնում նույնն է, ինչ որ Շամիրամը Վանում և Նանեն Բարձր Հայքում», Ն. Ադոնց, Հին Հայրոց աշխարհայացքը, էջ 41: Մեկ այլ աղբյուրվ անդրադառնալով Հերալի կողմից առանց Ջևաի Արեսին հրաշալի ծաղկից ծնելու ավանդազրույցի համեմատական վերլուծությանը, տեսաբանը հանգում է այն հետևության, որ «Հերան այստեղ նույնանիշ է Նանեին և ուրեմն Արեսը՝ Ատիսին», **նույն տեղում**, էջ 50: Տե՛ս նաև Ղ. Ալիշան, Հայրոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, էջ 143-144:

ռարաններում մորը անվանում են «Նան», «Նանի», «Նանե»): Դրանով կարելի է բացատրել նաև այն, որ մոր նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքը, ակնածանքը, սերն ու հարգանքը հայ ժողովրդի հիմնական բնութագրական հատկանիշներից մեկն է:

Հունական դիցաբանության մեջ համանուն հովանավոր աստվածուհի է համարվել Դեմետրան՝ պտղաբերության, երկրագործության, հասկի հասունացման աստվածուհին, Քրոնոսի և Դեմայի դուստրը, Զևսի քույրը և Պերսեփոնեի մայրը: Մայր հողի պաշտամունքը հատուկ է եղել երկրագործական բոլոր ժողովուրդներին, որոնց դիցաբանական համակարգերում հողը համարվել է կյանքի մախահիմքը, ամեն մի գոյի մայրը, այնպիսի գոյի, որը վերջին հաշվով վերադառնում է մայր հողի գիրկը: Հունական դիցաբանական համակարգում ամենայն հավանականությամբ Դեմետրան համարվել է միայն երկրի պտղաբերության «տնօրինողն» ու «հովանավորը»: Իսկ ավելի ուշ շրջանի պաշտամունքային պատկերացումներում նա համարվել է «երկրագործության հովանավորը»: Մայրական պաշտամունքի հետ ունեցած կապի վկայություններից մեկն էլ այն է, որ Դեմետրան համարվել է նաև ամուսնության և ընտանիքի հովանավոր Աստվածուհի: Տոհմատիրության շրջանում Դեմետրան համարվել է երկրորդական աստվածություն: Փաստն այն է, որ Հոմերոսը նրան չի ընդգրկել անգամ օլիմպոսյան աստվածների ընտանիքում և նրա մասին սակավ է հիշատակում: Հունական հասարակական կյանքում Դեմետրայի պաշտամունքը լայն տարածում է ստացել երկրագործության դերի բարձրացմանը զուգընթաց: Արդեն մ. թ. ա. 7-6-րդ դարերում նա իր պատվավոր տեղն է զրավել նաև օլիմպոսյան պանթեոնում: Դեմետրայի պաշտամունքը համապատասխանել է Հռոմի Ցերերա Աստվածուհու պաշտամունքին¹⁶: Հունական դիցաբանության վաղ շերտում եղել է երեք աստվածուհիների՝ Հռեայի (մայր), Դեմետրայի (կին) և Պերսեփոնեի (դուստր) պաշտամունք: Ավելի ուշ այս եռյակին է միացել չորրորդ՝ արական տարրը՝ Հադեսը: Հետագայում Հռեան՝ օլիմպիական բոլոր աստվածների մախամայրը, ետին պլան է մղվել և եռյակ են կազմել Դեմետրան, Պերսեփոնեն և Հադեսը: Իսկ վերջին երկուսը անձնավորել են կյանքի շարունակականությունը:

Փռուզիական դիցաբանության մեջ հովանավոր աստվածուհի է համարվել Կիբելան: Նա համարվել է «Մեծ Մայր», երկրի վրա ապրող ամեն ինչի և

¹⁶ Մանրամասները տե՛ս Դիցաբանական բառարան, Երևան, 1985, էջ 57, 2. 2. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, էջ 492-496, 549-553, 558-560, **Всеобщая история религий мира** (иллюст. энциклопедия), с. 181-182; **Зелинский Ф. Ф.** Религия эллинизма, с. 29; **Мифы народов мира** (энциклопедия). Т. 1, с. 364-366; **Мифология.** Большой энциклопедический словарь, с. 181-182; **Торчинов Е. А.** Религии мира: Опыт запредельного. Психотехника и трансперсональное состояние. СПб., 2007, с. 195-197:

աստվածների մայր, որը վերածնունդ է մեռած բնությունը և նրան պտղաբերություն է պարգևում: Հնում հավատում էին, թե Կիբելան բնակվում է լեռների գագաթներին¹⁷ և շրջում առյուծներ և հովազներ լծած ռազմակառքով: Առասպելն ավանդում է, որ Կիբելեն սիրել է Ատտիսին: Ըստ Լիդիական մի ասքի՝ Ատտիսը մահանում է վարազից ստացած վերքից (նույնական է Ադոնիսի ասքին) և Կիբելեի խնդրամբով աստվածներից արժանացել է հարության: Եվ երբ Ատտիսը դադարել է Կիբելային սիրելուց և ցանկացել է ամուսնանալ մահկանացու կնոջ հետ, Կիբելան հայտնվել է հարսանյաց խնջույքին և բոլոր ներկաներին ախտահարել է մոլագարությամբ: Մոլագարված Ատտիսը փախել է լեռներ և մահացել: Կիբելեի պաշտամունքը լայնորեն տարածված է եղել նաև Առաջավոր Ասիայի այլ տարածաշրջաններում¹⁸:

Հռոմեական դիցաբանության մեջ հովանավոր աստվածուհի է համարվել Բելլոնան: Դիցաբանական նախնական՝ հնագույն շերտում նա սաբինյան ռազմի աստվածուհին էր Մարսի կինը (այլ տարբերակներում՝ դայակը կամ քույրը): Պատմական հնագույն փուլում Փոքր Ասիայում, Թրակիայում և Պոնտոսում Բելլոնայի պաշտամունքը նույնացվել է Լուսնի աստվածուհու պաշտամունքի հետ: Նա է համարվել մահացածներից առաջին հարություն առածը¹⁹: Կարծիք կա, որ Բելլոնայի պաշտամունքը Հռոմ է թափանցել միհրդատյան պատերազմների ազդեցությամբ²⁰:

Հին Եգիպտոսի դիցապաշտական աստվածուհիների շարքում կենտրոնական տեղ է զբաղվել պտղաբերության, մաքրության հովանավոր, կյանք և առողջություն պարգևող աստվածուհի Իզիդան: Նրա պաշտամունքը սերտորեն կապված էր իր եղբոր և ամուսնու՝ մեռնող և հառնող բուսականությունն անձնավորող Օսիրիսի պաշտամունքի հետ: Իզիդայի պաշտամունքը տարածված

¹⁷ «Մեծ Մայրը ամենից առաջ և ամենուր լեռնային աստվածուհի է, - այս կապակցությամբ գրում է Ֆ. Ջելինսկին, - դրանում է նրա նախնական նշանակությունը: Եվ նրա տոնը ամենուր և միշտ զարմանալիքն տոն է», **Зелинский Ф. Ф.** Религия эллинизма, с. 41.

¹⁸ **Ն. Ադոնց**, Հին Հայոց աշխարհայացքը, էջ 37, 41, 42, **Ջ. Ջ. Ֆրեդեր**, Ոսկե ժյուղը, էջ 410-414, 416-417, 419-420: Տե՛ս նաև Мифы народов мира (энциклопедия). Т. 1, с. 647; Мифология. Большой энциклопедический словарь, с. 286-287; **Торчинов Е. А.** Религии мира: Опыт запредельного. Психотехника и трансперсональное состояние, с. 154-156:

¹⁹ Մամրամասները տե՛ս Դիցաբանական բառարան, էջ 46, Всеобщая история религий мира (иллюст. энциклопедия), с. 181-182: Տե՛ս նաև, **Элиаде М.** Космос и история, с. 90, տե՛ս նաև **Ուոլֆ** **Миф о вечном возвращении**, с. 25: Հնդկական դիցաբանում նույնատիպ հովանավոր աստվածուհի է համարվել Շիվայի կինը և ռազմի աստվածուհի համարվող Կալին: Նա պատկերվել է սև հանդերձներով, պարանոցին կրել է խեցիներից պատրաստված զարդեղեն: Կալի աստվածուհին ունցել է չորս ձեռք, որոնցից երկուսով պահել է մարդկանց կտրած գլուխները, իսկ մյուս երկուսով՝ դաշույն և դանակ, իսկ ինքը շրջապատված է իր զոհի արյամբ: Կալի դիցուհու բազմազործառնական նկարագրության մամրամասները տե՛ս **Темкин Э. Н., Эрман В. Г.,** Мифы Древней Индии. М., 1982, с. 214-218:

²⁰ Տե՛ս Всеобщая история религий мира (иллюст. энциклопедия), с. 130:

է եղել նաև հունա-հռոմեական աշխարհում: Լուսատուների ստեղծողի և ծովագնացների հովանավորուհի, առաջաստի գյուտարար, փրկության տվող ամենակարող աստվածուհի Իզիդային նվիրված տոնակատարությունները միստերիաների բնույթ են կրել: Հին Եգիպտոսում Իզիդան պատկերվել է նստած, գլխին՝ կռվի եղջյուրներով թագ, կենտրոնում՝ արեգակի սկավառակը: Շատ հաճախ Իզիդան պատկերվել է իր որդուն՝ մանուկ Հորոսին գրկած: Պահպանված տեղեկությունները վկայում են նաև, որ Իզիդային վերագրվել են բազմազործառական խորհրդանշաններ: Նա ամենից առաջ համարվել է բարոյական բարձր նկարագիր ունեցող աստվածուհի, ով հուսահատվածներին հույս, մխիթարանք և փրկության երաշխիք է տվել: Նրան վերագրվել են նաև երկրագործական խորհրդանշաններ (համարվել է պտղաբերության, ցորենի, գարու և գեղջկական դիցուհի), ինչպես նաև համարվել է ջրերի տիրուհի, մոգության, կախարդության և «զաղտնի գիտելիքների» տիրակալը: Եվ այդ տեսանկյունից հովանավոր աստվածուհիների պաշտամունքը ավելի հին է քան աստված հովանավորներինը²¹:

Փաստերն աներկբա վկայում են, որ հասարակական կյանքի և պաշտամունքի զարգացմանը զուգընթաց դիցարաններում աստվածուհիների թիվն աստիճանաբար մեծանում է: Հին՝ արխայիկ աստվածուհիները ձեռք են բերում նոր գործառնություններ և «հովանավորում են» հասարակական, քաղաքական, տնտեսական և ընտանեկան կյանքի տարբեր կողմեր: Այդպիսի բազմազործառական հատկանիշներով է օժտված բաբելոնական Իշտարի նախատիպը՝ շուներական աստվածուհի Ինանան՝ Թամնուզի կինը և Ուրուկի հովանավոր աստվածուհին: Նրա սիրտն ու ձեռքը նվաճելու համար վեճ է սկսվում, որի արդյունքում մարդկությունը անասնապաիությունից անցում է կատարում երկրագործության: Նա իրեն ամուսին է ընտրում ոչ թե հողագործ Էնկիդուին, այլ՝ ողբերգական ճակատագիր ունեցող հովիվ Թամնուզին: Այս աստվածները անձնավորում են նաև բնության շրջափուլերը և վերածնունդը: Իսկ մայր-աստվածուհին որպես կանոն ձեռք է բերում մեռնող և հարություն

²¹ Մանրամասները տե՛ս **Պիցարանական բառարան**, էջ 103, *Всеобщая история религий мира* (иллюстр. энциклопедия), с. 70; *Мифы народов мира* (энциклопедия). Т. 1, с. 568-570; *Мифология. Большой энциклопедический словарь*, с. 257-258: Մայրական սիրտ արբենիպը եգիպտոսում Իզիդա աստվածուհին է, որը վառ արտահայտված է նրա և իր որդու՝ Հորոսի փոխհարաբերության մեջ: Նա նվիրված և հոգատար մայր էր, որը մշտապես և ամեն ինչում օգնում է իր զավակին: Հունական դիցարանում մայրական սերը իր արտացոլումն է գտել Դեմետրա-Պերսեփոնե փոխհարաբերության տեսքով: Դեմետրան և Պերսեփոնեն՝ մայր ու դուստր, ներառում են դիցաբանական վերին և ստորին սահմանները: Նրանց միջև կապը ոչ մի կերպ չի կարելի համարել զուտ մակերեսային: Իսկ եգիպտական մի հին իմաստություն հորդորում է՝ «Կրի՛ր մորդ ձեռքերի վրա, ինչպես նա համբերությամբ կրում էր քեզ իր արգանդում: Կրկնապատկի՛ր այն հացը, որ քեզ տվել է մայրդ»:

առնող աստծու (Իզիդա-Օսիրիս, Կիբելա-Ատտիս, Իշտար-Ինանա)-Թամմուզ և այլն) խորհրդանշան, որով սկիզբ է դրվել նաև հուդարկավորության և սգո ծեսերին:

Ըստ Կ. Յունգի՝ նման պաշտամունքները համապատասխանել են եթե ոչ Արքետիպի, ապա առնվազն որևէ կարգի, որի արժեքը անկասկած է եղել: Բացասական երևույթից վիշտը վերածվել է հոգևոր բովանդակության՝ կյանքի փորձի: Մենք այստեղ, իհարկե, նկատի ունենք տանջանքն իբրև երևույթ: Այլ է աստվածային «տառապանքը», որը մահվան միջոցով տանում է հարության: Մահվան և հարության դիցաբանական պատումն առկա է բոլոր հին դիցաբանական համակարգերում: Սահմանափակենք միայն այն հիշեցումով, որ Թամմուզի տառապանքը, մահը և հարությունը այլ պաշտամունքների մոդել հանդիսացան, ինչպիսին է օրինակ Մարդուկի պաշտամունքը:

Մայր-աստվածուհին հովանավորել է նաև հայրենիքը, ընտանեկան ջերմությունը, տոհմի անվտանգությունը, տունը և օջախը:

Հռոմեական դիցաբանության մեջ օջախի հովանավոր աստվածուհին համարվել է Վեստան՝ քաղաքացիական համայնքի կարգուկանոնի հովանավոր աստվածուհին: Վեստայի քրմուհիները ի նշան հնազանդության միշտ ամմար են պահել տաճարում վառվող կրակը: Վեստալուհիները ընտրում էին 6-10 տարեկան աղջիկների, որոնք պետք է մինչև 30 տարեկանը պահպանեին իրենց կուսությունը, խախտելու դեպքում նրանց պատիժ էր սպասվում: Ակընհայտ է, որ դա եղել է մայր-դուստր հարաբերության դիցահավատքային աշխարհընկալման դրսևորումներից մեկը:

Մայր-աստվածուհու մեկ այլ գործառույթ է կախարդությունը (մոգությունը): Հունական դիցաբանության մեջ որպես կախարդ-աստվածուհի աչքի է ընկնում Զեկատեն: Նա մշուշի, գիշերային տեսիլների, հմտության աստվածուհին է: Նա Ձևից ստացել էր երկրի և ծովի ճակատագրերի վրա իշխելու իրավունքը: Զեկատեն իր շների հետ որսի է դուրս գալիս գերեզմանների շուրջ, դուրս է կանչում մեռյալների ստվերները, թուրմ պատրաստում կախարդանքի համար: Նրան դիմում էին կախարդություն նպատակով: Նա օգնել է Մեդեային՝ Յասոնի սիրուն հասնելու համար: Նա երկակի կերպար ունի՝ երկրային և երկնային, կապում է այդ երկու աշխարհները: Նա խորհրդանշում է մութը և դրա հետ մեկտեղ Լուսնի աստվածուհին է: Զեկատեն օգնում է Դեմետրային գտնելու իր դստերը՝ Պերսեփոնեն: Նա պատկանում է Դեմետրա-Պերսեփոնե աշխարհին: Մեկ ուրիշ կողմից նա Դեմետրայի երկվորյակն է: Դիցաբանական երկու պատում կա: Առաջինում Պերսեփոնեն որոնելու համար անդրաշխարհ է իջնում Դեմետրան, իսկ երկրորդում՝ Զեկատեն: Զեկատեն և Պերսեփոնան այնպես անբաժանելի են միմյանցից, ինչպես Պերսեփոնեն և Դեմետրան: Սա

անհատական կերպարներով աստվածուհիների եռամիություն մի փոքրիկ խումբ է՝ Մայր, Աղջիկ և Լուսին-Յեկատեն, որոնցից յուրաքանչյուրի ատրիբուտը քահն է:

Յեկատենի դիցաբանական կերպարը նման է Սելենայի և Արտեմիսի կերպարներին: Յեկատենին կարելի է համարել Արտեմիսի գիշերային հիպոստազը: Նա նույնպես մութ գիշերով շների ուղեկցությամբ է որսի դուրս գալիս գերեզմանների շուրջ: Սահմանային իրավիճակը մեծանում է մինչև սահմանային գոտու՝ մայրության և կուսության, կյանքի, խնդության և սպանության ձգտման, պտղաբերության և փոխադարձ հարաբերակցության միջև: Նրա աշխարհը վայրի բնության աշխարհն է: Նրանում հավասարակշռվում է կոպիտ իրակա-նությունը՝ չնվաճված կուսությունը և ծնունդի սարսափը, ինչը գերակշռում է մաքուր, բնական, կանացի աշխարհում:

Հայկական դիցարանում կախարդ-աստվածուհիներ են համարվել Գիշերամայրերը: Նրանց պատկերել են որպես գիշերային խավարի չար կախարդներ, որոնք օծերը ձեռքերին աշխարհի ստեղծման օրվանից հետապնդել են արևին: Նրանք բարձրացել են լեռան վրա՝ արևին բռնելու, բայց չեն կարողացել: Դրա համար էլ նրանք ամենուր խմբերով փնտրել են արևին: Եթե նրանց հաջողվեր տեսնել արևը, մարդկությունը կմահանար, իսկ երկիրը կպատվեր օծերով ու խավարով:

Մայր-աստվածուհու մեկ այլ գործառույթը կապված է ջրի և խոնավության հետ: Հայկական դիցարանում սիրո, գեղեցկության, ջրի և խոնավության աստվածուհի է համարվել Աստղիկը: Ժողովրդական ավանդույթը պատմում է, որ նա ամեն գիշեր լողացել է Գրգուռ սարի վրա, որի դիմաց, Պաղատ լեռան վրա հավաքվել են սիրահարված տղաները և խարույկ վառել, որպեսզի այդ լույսի տակ տեսնեն չքնաղ գեղեցկուհուն: Բայց Աստղիկ աստվածուհին մշուշ էր իջեցնում լեռան վրա: Նա համարվում էր ջրի և արգասավորության հովանավորը: Ամպրոպային Վահագն աստծո սիրուհին: Հին Հայաստանում Աստղիկի և Վահագնի սերը սուրբ էին համարում և մարդիկ կարծում էին թե նրանց հանդիպումից անձրև է տեղում երկրի վրա, ստեղծում բերք ու բարիք²²: Սիրո և գեղեցկության աստվածուհի Աստղիկին էր նվիրված Վարդավառի տոնը, որը խորապես արմատավորված է եղել հին հայերի կենցաղում: Դի-ցուհու հունական համարժեքը Աֆրոդիտեն է:

Հունական դիցաբանության մեջ Աֆրոդիտեն համարվել է սիրո, գեղեցկության, ջրի և խոնավության աստվածուհին: Նա ծնվել է ծովի ճերմակ

²² Ղ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, էջ 144-146, Դիցաբանական բառարան, էջ 27-28, Мифы народов мира (энциклопедия). Т. 1, с. 118; Мифология. Большой энциклопедический словарь, с. 67:

փրփուրից: Սկզբնական շրջանում համարվել է պտղաբերության և ծովի աստվածուհի: Նրա դիցաբանական կերպարը կրել է Փյունիկյան Աստարտե աստվածուհու ազդեցությունը: Իսկ օլիմպիական դիցարանում նա համարվել է հավերժ դեռատի և զեղեցկագույն աստվածուհի, որն իշխում է մարդկանց և աստվածների սրտերին, սեր պարգևում նրանց: Աֆրոդիտեին ուղեկցել են զեղեցկության և նազանքի աստվածները: Այս պաշտամունքի հռոմեական համարժեք է ծովախեցուց ծնված Վեներա դիցուհին²³:

Շումերական դիցարանում ջրի և ջուր նվիրաբերող աստվածուհի է համարվել Իշտարը: Նրա պաշտամունքը վկայում էր մշակութային զարգացման ավելի բարձր մակարդակի մասին: Ջուր նվիրաբերելով նա միաժամանակ հովանավորել է հողագործության ծաղկումը: Իսկ եթե հրաժարվեր ջուր տալ, ապա կսկսվեր ծարավ, սով և երաշտ: Նրա ատրիբուտը ջրի կուժը աստվածուհու և իզական սկզբի խորհրդանիշն էր²⁴:

Մայր աստվածուհու պաշտամունքը, որպես կանոն, ուղեկցվել է ծիսական պարերով, որոնք համարվել են սրբազան: Շարժումները վերարտադրվում էին կախարդանքի միջոցով: Այլ դեպքում համարվել է, որ այն տրված էր սրբության կողմից (ինչպես օրինակ պիրիսան՝ զենքով պարը, որը ստեղծել է Աթենասը կամ Թեսևսի պարը լաբիրինթոսում): Հայտնի է, որ Հռոմում Պերսեփոնեի պատվին խմբերգ է ձոնվել, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ հռոմեական պաշտամունքում մույնպես եղել են ծիսական պարեր: Երբեմն ծիսական պարեր են կատարվել նաև կերակուր հայթայթելու, մահացածներին տուրք հատուցելու և ողջ տիեզերքում կարգ ու կանոն հաստատելու նպատակով:

Բանալի բառեր - արքեսիպ, դիցաբանական, Մայր աստվածուհի, պաշտամունք, ծես, Ամահիտ, սինկրետիզմ

²³ Մանրամասները տե՛ս Դիցաբանական բառարան, էջ 40-42, Ե. Կուն, Հին Հունաստանի լեզունդներն ու առասպելները, Երևան, 1979, էջ 55-56, Всеобщая история религий мира (иллюстр. энциклопедия), с. 70; Мифы народов мира (энциклопедия). Т. 1, с. 568-570; Мифология. Большой энциклопедический словарь, с. 257-258:

²⁴ Всеобщая история религий мира (иллюстр. энциклопедия), с. 70; Мифы народов мира (энциклопедия). Т. 1, с. 568-570; Мифология. Большой энциклопедический словарь, с. 257-258:

МИФОКУЛЬТОВАЯ ОБЩНОСТЬ БОГИНИ-МАТЕРИ (КУЛЬТЫ ДРЕВНЕГО ВОСТОКА И ПЕРЕДОВОЙ АЗИИ)

Г. А. САРКИСЯН

Кандидат философских наук, доцент

На основе данных сравнительной мифологии и современного религиоведения в статье показывается, что культ главного женского божества в большинстве мифологий мира, Богини-Матери, проявляется тождественными символами. Проследивая культ Богини-Матери, автор выделяет те основные характеристики созидательной функции прародительницы вселенной со своими аспектами (Великая Мать, созидательница и покровительница населяющих вселенную существ, супруга бога-творца, покровительница культуры и Мать-покровительница культурных героев, источник вечного возрождения и т.д. и т.п.), которые определяют ее центральное место в архаических мифологиях Древнего Востока и Передовой Азии. Автором выделяются также причины тождественности мистериального и оргастического характера культа Богини-Матери в мифологических моделях Древнего Востока и Передовой Азии.

THE UNIVERSALITIES OF THE MYTHOLOGICAL WORSHIP OF THE MOTHER GODDESS (CULT IN ANCIENT EAST AND LEADING ASIA)

G. A. SARGSYAN

Candidate of Philosophy, Associated Professor

On the basis of comparative mythology and contemporary religious studies the article shows that the cult of chief feminine Goddess Mother God appears in the forms of traditional symbols in the majority of mythologies of the world. Analyzing the cult of the Mother Goddess author identifies those basic characteristics of creative function ancestress of the universe with its aspects (the Great Mother, creatrix and patron of creatures in the universe, the wife of the creator god, patron of culture and Protecting-Mother of cultural heroes, the source of eternal rebirth, etc. etc.).

The author defines the reasons of worship for mysteriological and organic nature of Mother Goddess in models of Ancient East and Leading Asia.